

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.2. Առևտրային բանկեր

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, 2000թ. հունվարի 1-ի դրությամբ գործող բանկերի (բանկային գործառնություն իրականացնելու արտոնություն ունեցող) քանակը 31 միավոր է, իսկ բանկերի մասնաճյուղերի ընդհանուր քանակը՝ 178 միավոր:

Առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները 2000թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 190860,8 մլն. դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 157796,9 մլն. դրամ: Առևտրային բանկերի ընդհանուր կապիտալը 2000թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 33048,4 մլն. դրամ, որից կանոնադրական հիմնադրամը՝ 22932,9 մլն. դրամ (ընդհանուր կապիտալի 69,4 %-ը), իսկ գլխավոր պահուստը՝ 2234,1 մլն. դրամ:

Առևտրային բանկերի 1999թ. տարեկան զուտ շահույթը կազմել է 3934,0 մլն. դրամ, ընդ որում շահույթով աշխատող 25 բանկերի շահույթը կազմել է 4673,5 մլն. դրամ, իսկ վնասով աշխատող 6 բանկերի վնասը՝ 739,5 մլն. դրամ:

Առևտրային բանկերի վարկային ներդրումները (դրամով և տարադրամով) 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ կազմել են 79825¹ մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել՝ 5428 մլն. դրամով կամ 7,3 %-ով:

2000թ. փետրվարի 1-ի դրությամբ արտարժույթով տրամադրվել է 66187 մլն. դրամի վարկ, որը կազմել է ընդամենը վարկային ներդրումների 82,9%-ը: Արտարժույթով վարկավորման ծավալները տարեսկզբի նկատմամբ աճել են 5557 մլն. դրամով կամ 9,2%-ով:

Վարկային ներդրումների ընդհանուր ծավալում կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը կազմել է 50,5² %, երկարաժամկետինը՝ 49,5 %:

2000թ. փետրվարի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 9251 մլն. և 6728 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ երկարաձգված վարկերն աճել են 700 մլն. դրամով, իսկ ժամկետանց վարկերը նվազել՝ 3202 մլն. դրամով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 1629 մլն. դրամով կամ 5,3 %-ով և 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ կազմել՝ 32314 մլն. դրամ:

2000թ. հունվարի ընթացքում ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 25658,3 մլն. դրամ, իսկ ծախսերը՝ 27193,6 մլն. դրամ: Ծախսերը գերազանցել են մուտքերի գումարը 1535,3 մլն. դրամով: Նույն ժամանակահատվածում արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 8707,8 մլն. դրամ,, իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 7328,5 մլն. դրամ: Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 1380,3 մլն. դրամով:

¹ ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը

² ընդգրկված են մինչև 360 օրնարման ժամկետ ունեցող վարկերը